ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

27.02.2025թ. կնքված № ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/14-1 ծածկագրով պետության կարիքների համար տվյալների փոխանցման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «20» մարտի 2025թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ի դեմս ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա. Եսայանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Պատվիրատու») մի կողմից և «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն՝ ի դեմս կորպորատիվ վաճառքի վարչության ղեկավար Կ. Ասատուրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Կատարող») մյուս կողմից (այսուհետև՝ «Կողմեր»), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և 27.02.2025թ. կնքված N ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/14-1 գնման պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 7.5 կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին

1.1 Պայմանագրի 3.1 կետի 2-րդ պարբերության «Կատարողը ծառայությունը մատուցելու համար հանձնման-ընդունման արձանագրությունները ներկայացնում է յուրաքանչյուր եռամյսակի համար առանձին: Յուրաքանչյուր եռամյսակի համար մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, իսկ 4-րդ եռամսյակի համար՝ 29.12.2025թ.-ին» բառերը փոխարինել «Յուրաքանչյուր ամսվա մատուցված ծառայության համար մինչև հաջորդ ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար՝ 29.12.2025թ.-ին» բառերով:

2. Այլ պայմաններ

2.1. 27.02.2025թ. կնքված N ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/14-1 ծածկագրով պետության կարիքների համար տվյալների փոխանցման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ՝ 900011018539
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝

_____ Ա. Եսայան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ազատության 24/1
ՀՎՀՀ՝ 02500052
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 163004038861
Կորպորատիվ վաճառքի վարչության
ղեկավար՝

_____ Կ. Ասատուրյան
/ստորագրություն/ Կ.Տ